ԵԴ1/2716/01/25
(ՀԿԴ/0169/01/25)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7 օգոստոսի 2025 թվական ք.Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ուսումնասիրելով թիվ ԵԴ1/2716/01/25 (ՀԿԴ/0169/01/25) քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2025 թվականի հուլիսի 29-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2025 թվականի հուլիսի 9-ին Հակակոռուպցիոն դատարանում ստացվել է Քնարիկ Արամի Ղազարյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 46-256-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով թիվ 59105824 (ՀԿԴ/0169/01/25) քրեական վարույթը:

1.1. Հակակոռուպցիոն դատարանը (դատավոր Ա.Գրիգորյան) 2025 թվականի հուլիսի 10-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0169/01/25 քրեական վարույթը ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2. Հակակոռուպցիոն դատարանը 2025 թվականի հուլիսի 22-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0169/01/25 քրեական

վարույթն ըստ առարկայական ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելու մասին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր Ա.Դանիելյան) 2025 թվականի հուլիսի 29-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0169/01/25 (ԵԴ1/2716/01/25) քրեական վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի օգոստոսի 4-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. 2024 թվականի օգոստոսի 13-ի որոշմամբ Քնարիկ Ղազարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 46-256-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքի համար, որ նա *«(…) հանդիսանալով «Մարաթուկ մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հասմիկ Բաղդասարյանի մտերիմը, իրավաբանորեն տնօրինելու իրավունքով Հասմիկ Բաղդասարյանին հանձնված խոշոր չափերի դրամական միջոցները հափշտակելուն օժանդակելու միասնական դիտավորությամբ, «Մարաթուկ մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հասմիկ Բաղդասարյանին ներկայացրել է աշխատանքի ընդունման դիմում՝ ՀՈԱԿ-ի մենակատարի հաստիքին իրեն աշխատանքի ընդունելու վերաբերյալ և տրամադրել տեղեկություններ անձնական տվյալների մասին: Հասմիկ Բաղդասարյանը օգտագործելով Քնարիկ Ղազարյանի տրամադրած տեղեկատվությունը՝ վերջինիս դիմումի հիման վրա 27.02.2020 թվականին Քնարիկ Ղազարյանին հրամանագրել է «Մարաթուկ մշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ի մենակատարի հաստիքին և քաջատեղյակ լինելով վերջինիս կողմից աշխատանքի չհաճախելու, գործառութային պարտականությունները չիրականացնելու մասին, հաշվարկվել և Քնարիկ Ղազարյանին 27.02.2020 թվականից մինչև 2020 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակահատվածում յուրաքանչյուր ամիս սահմանված աշխատավարձի և այլ*

հավելումների չափով գումարային փոխանցում է կատարվել նրա բանկային հաշիվներին, որի արդյունքում Քնարիկ Ղազարյանին փոխանցվել է 685.600 ՀՀ դրամ, որը վերջինիս կողմից կանխիկացվել է: Այդ կերպ՝ Քնարիկ Ղազարյանն օժանդակել է Համիկ Բաղդասարյանին հափշտակել նրան վստահված՝ ազատ կամքով իրավաբանորեն հանձնված, Երևան համայնքի խոշոր չափերի՝ 685.600 ՀՀ դրամ գումարը: (…)»[1]*:*

6. Հակակոռուպցիոն դատարանը 2025 թվականի հուլիսի 22-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Վերոշարադրյալ իրավանորմերի լույսի ներքո դիտարկելով մեղադրյալ Քնարիկ Արամի Ղազարյանին ներկայացված մեղադրանքի փաստական նկարագիրը, Դատարանը հաշվի է առնում, որ վերջինիս նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, այն է՝ «Հանցավորին վստահված, այսինքն՝ նրա տնօրինմանը, տիրապետմանը կամ օգտագործմանը փաստացի կամ իրավաբանորեն ազատ կամքով հանձնված գույքի հափշտակությունը, եթե այդ գույքը հափշտակելու դիտավորությունը ծագել է օրինական հիմքերով այն ստանալուց հետո՝ խոշոր չափերով»:*

Վերոգրյալի հիման վրա՝ Դատարանը գտնում է, որ թիվ ՀԿԴ/0169/01/25 քրեական գործն ընդդատյա չէ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին, այլ ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, հաշվի առնելով, որ այն չի հանդիսանում ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքի վերաբերյալ վարույթ, ուստի անհրաժեշտ է թիվ ՀԿԴ/0169/01/25 քրեական գործը փոխանցել ըստ առարկայական ընդդատության: (…)»[2]*:*

7. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի հուլիսի 29-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Նախորդ կետում շարադրված փաստական հանգամանքներից երևում է, որ Քրիստինե Ղազարյանի վերաբերյալ թիվ 59105824 վարույթն անջատվել է թիվ 58154820 կոռուպցիոն հանցանքի վերաբերյալ վարույթից, և մեղադրյալ Քնարիկ*

---

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 7, թերթեր 63-64:
[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 8, թերթեր 23-26:

Ղազարյանին վերագրված է թիվ ՀԿԴ/0156/01/24 քրեական գործով (նախաքննական համարը 58154820) մեղադրյալ Հասմիկ Բաղդասարյանի կողմից կոռուպցիոն բնույթի ենթադրյալ հանցանքի կատարմանն օժանդակելու վերաբերյալ արարք: Վերոգրյալից բխում է, որ Քրիստինե Ղազարյանին ներկայացված մեղադրանքն անմիջականորեն կապված է Հակակոռուպցիոն դատարանում քննվող կոռուպցիոն վարույթի հետ:

Վերոգրյալ համատեքստում, հաշվի առնելով նույնանման փաստական հանգամանքներով քրեական գործերով առարկայական ընդդատության մասին վեճը լուծելիս Վճռաբեկ դատարանի արտահայտած կայուն իրավական դիրքորոշումները, Դատարանը գտնում է, որ թեև ՀՀ քրեական օրենսգրքի 46-256-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը չի հանդիսանում կոռուպցիոն հանցագործություն և նախատեսված չէ ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N1-ով, սակայն գործի համակողմանի քննության, օրենքի առջև հավասարության սկզբունքի ապահովման և նույն փաստական հանգամանքերով երկու՝ իրար հակասող եզրափակիչ դատական ակտերի կայացման հավանականությունը բացառելու տեսանկյունից առկա է անհրաժեշտություն դրա քննությունն իրականացնել ՀՀ հակակոռուպցիոն դատարանի կողմից՝ մեկ վարույթի շրջանակներում: Հետևաբար՝ գտնում եմ, որ սույն քրեական գործն ընդդատյա է ՀՀ հակակոռուպցիոն դատարանին:

(…) Այսպիսով՝ ելնելով արդարադատության շահի պաշտպանությունից և վարույթի արդարացիության ապահովման անհրաժեշտությունից՝ գտնում եմ, որ սույն քրեական գործն ընդդատյա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին և այն պետք է ուղարկել Վճռաբեկ դատարան՝ առարկայական ընդդատության հարցը լուծելու համար: (…)»[3]*:*

8. 2024 թվականի օգոստոսի 26-ին Հակակոռուպցիոն դատարանը որոշում է կայացրել Հասմիկ Ալֆրեդի Բաղդասարյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, Արմեն Հենրիկի Սարգսյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 46-256-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, Անի Արմենի Սարգսյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 46-256-րդ հոդվածի 2-րդ մասի

[3] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 8, թերթեր 35-41:

3-րդ կետով և Սոնա Տիգրանի Սարգսյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 46-256-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով թիվ ՀԿԴ/0156/01/24 քրեական վարույթը ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին[4]:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.</u>

9. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/2716/01/25 (ՀԿԴ/0169/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

10. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

11. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

11.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[5]:

Միևնույն ժամանակ, դատարանի մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ. *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ*

---

[4] Տե՛ս *www.datalex.am* Դատական տեղեկատվական համակարգ, թիվ *ՀԿԴ/0156/01/24* քրեական վարույթը:

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»[6]*:*

12. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. «*(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[7]*:*

13. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է

---

[6] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

[7] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

իրականացնի արդարադատություն: Ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել՝ իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարաններին (այսուհետ՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան) ընդդատյա են առաջին ատյանի կարգով իրականացվող բոլոր վարույթները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նախնական դատալսումների ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

(…)

5. Վարույթն ըստ ընդդատության ստացած հակակոռուպցիոն կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատալսումներ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա առարկայական ընդդատությանը:

(…)

8. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը, Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահները վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա

ժամկետում վերջնականապես լուծում են վարույթի առարկայական ընդդատության հարցը՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան»:

15. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Հակակոռուպցիոն դատարանը, փաստելով, որ թիվ ՀԿԴ/0169/01/25 քրեական վարույթը չի հանդիսանում ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքի վերաբերյալ վարույթ, որոշում է կայացրել վարույթն ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելու մասին[8]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, փաստելով, որ Ք.Ղազարյանին ներկայացված մեղադրանքն անմիջականորեն կապված է Հակակոռուպցիոն դատարանում քննվող կոռուպցիոն վարույթի հետ, գտել է, որ գործի համակողմանի քննության, օրենքի առջև հավասարության սկզբունքի ապահովման և նույն փաստական հանգամանքերով երկու՝ իրար հակասող եզրափակիչ դատական ակտերի կայացման հավանականությունը բացառելու համար, անհրաժեշտ է վերոնշյալ գործերի քննությունն իրականացնել մեկ վարույթի շրջանակներում[9]:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պետք է փաստել, որ Ք.Ղազարյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման բովանդակությունից հետևում է, որ վերջինս ենթադրաբար օժանդակել է «Մարաթուկ մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հասմիկ Բաղդասարյանի կողմից Երևան համայնքից խոշոր չափերի գումար հափշտակելուն: Վերոշարադրյալը հիմք է տալիս փաստելու, որ Ք.Ղազարյանին ներկայացված մեղադրանքը փաստական հանգամանքներով անմիջականորեն կապված է

---

[8] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[9] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

Հակակոռուպցիոն դատարանում քննվող թիվ ՀԿԴ/0156/01/24 քրեական վարույթով մեղադրյալ Հասմիկ Բաղդասարյանի մեղադրանքի հետ:

Նման պայմաններում ընդունելի են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատողությունները, որ թիվ ՀԿԴ/0169/01/25 (ԵԴ1/2716/01/25) և ՀԿԴ/0156/01/24 քրեական վարույթներն իրարից անջատ քննվելու պարագայում չի բացառվում, որ նույն փաստական հանգամանքներով կարող են կայացվել երկու՝ իրար հակասող եզրափակիչ դատական ակտեր, ինչն էլ իր հերթին կարող է հանգեցնել իրավական անորոշության, ինչպես նաև իր ազդեցությունն ունենալ դատավարության արդարացիության՝ վարույթի պատշաճ և համակողմանի քննության վրա: Հետևաբար, գտնում ենք, որ առկա է սույն վարույթը Հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա լինելու հիմքը:

17. Վերոշարադրյալը հիմք է տալիս փաստելու, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/2716/01/25 (ՀԿԴ/0169/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին, հիմնավոր է:

18. Հետևաբար, գտնում ենք, որ թիվ ԵԴ1/2716/01/25 (ՀԿԴ/0169/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 8-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

Քնարիկ Արամի Ղազարյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 46-256-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով թիվ ԵԴ1/2716/01/25 (ՀԿԴ/0169/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ